ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանի շնորհավորական ուղերձը Մայրության եւ գեղեցկության տոնի կապակցությամբ

Թանկագի՛ն մայրեր, քույրեր, տիկնայք եւ դուստրեր, շնորհավորում եմ ձեզ՝ Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ:

Մայրության եւ գեղեցկության օրը տոնվում է ապրիլի 7-ին, որն իր մեջ կրում է Հայ Առաքելական Եկեղեցու կողմից նշվող Ս.Մարիամ Աստվածածնի Ավետման տոնի խորհուրդը: Բնության զարթոնքի ու արթնացման պահին նշվող Մայրության տոնն ինքնին գեղեցկություն է: Ահա թե ինչու, տոնն իր մեջ մեկտեղել է մայրությունն ու գեղեցկությունը:

Այս տոնը մեր մայրերին, քույրերին եւ կանանց մեծարելու, գնահատանքի խոսքեր հղելու հաճելի առիթ է: Կնոջ ամենաբարձր կոչումը՝ մայրությունը, մեր ժողովրդի համար միշտ եղել է սրբազան:

Սիրելի՛ հայուհիներ, շնորհավորելով գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ՝ մաղթում եմ ձեզ ընտանեկան ջերմություն, կանացի հմայք ու երիտասարդություն: Թո՛ղ որ մայրական երջանկությունը պարուրի ձեզ, թո՛ղ որ վայելեք բնությունից ձեզ շնորհված մեծագույն առաքելության՝ մայրության բերկրանքը: